ՈՒՂԵՐՁ ՏԱՐԱԾՔԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆԻՑ

Պահել պատվիրանները

Նախագահ Փեր Գ. Մալմ, ԱԵՏ 2 րդ Խորհրդական

Արգարե Ջոզեֆ Սմիթի միջոցով Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու վերականգնումը ներառում է Հիսուս Քրիստոսի կողմից քարոզված վարդապետությունների և սկզբունքների վերականգնումը իրենց անաղարտ տեսքով, երբ Նա քայլում էր երկրի վրա՝ Նրա անունով գործելու քահանայության իշխանության և անհրաժեշտ բոլոր բանալիների վերականգնումը, որոնք անհրաժեշտ են Իսրայելի Տունը հավաքելու և ծեսերն ու ուխտերը սպասավորելու և մեր Երկնային Հոր մոտ վերադառնալու համար:

Մենք իսկապես արտոնված ենք ապրելու այս շատ հատուկ ժամանակաշրջանում, երբ մեզ առաջարկված է ճաշակել ճշմարտությունը, մտնել ուխտերի մեջ և ապրել Աստծուն հաճելի կյանքով: Մենք ցույց ենք տալիս մեր պատրաստվածությունը մեր ցանկության, մեր հավատքի և մեր գործերի միջոցով: Մեր վկայությունը և մեր հանդեպ Աստծո սերը զգալու և մեր մերձավորին սիրելու մեր ունակությունը կարևոր են, որպեսզի մենք լցված լինենք ցանկությամբ՝ հավատարիմ լինելու մեր կապած ուխտերին և հրավիրելու մյուսներին գալ դեպի Քրիստոսը:

2010թ. հոկտեմբերի գերագույն համաժողովի «Հավատքի և բնավորության փոխակերպող զորությունը» վերնագրով իր ելույթում, Երեց Ռիչարդ Գ. Սքոթը հետևյալն ասաց վկայության և մեր կյանքում դրա ազդեցության մասին. «Վկայությունն ամրանում է հոգևոր տպավորություններով, որոնք հաստատում են ուսմունքի, արդար գործի ճշմարտացիությունը: Հաճախ նման առաջնորդությունը ուղեկցվում է հզոր զգացմունքներով, որոնք արցունքներ են բերում և դժվարացնում խոսելը: Սակայն վկայությունը զգացմունք չէ: Դա բնավորության էությունն է, հյուսված թելերից, որոնք սկիզբ են առել անթիվ ճիշտ որոշումներից: Այդ ընտրություններն արվում են վստահող հավատքով այն բաների հանդեպ, որոնց հավատում ենք, սակայն որոնք չենք տեսնում: Ամուր վկայությունը տալիս է խաղաղություն, հանգստություն և վստահություն: Այն առաջացնում է համոզմունք, որ եթե հետևողականորեն հնազանդվենք Փրկչի ուսմունքներին, կյանքը սքանչելի կլինի, ապագան՝ ապահով, և մենք ունակություն կունենանք հաղթահարելու մեր ճանապարհին հանդիպող դժվարությունները»: Նման վկայությամբ մենք կարող ենք հավատքով առաջ շարժվել մեր սեփական փրկության աշխատանքում և օգնել մյուսներին անել նույնը:

Ազատ ընտրության հավերժական սկզբունքը կապված է մեր անձնական պատասխանատվության հետ՝ թե ինչպես ենք մենք ապրում և պատվում մեր ուխտերը, որոնց մեջ մտել ենք: Մենք գիտենք, որ Աստված միշտ հավատարիմ կլինի մեզ տրված Իր խոստումներին: Այսպիսով, թե ինչպես կիրականանան այդ խոստումները, կախված է իրականում ձեզանից և ինձանից: Անշուշտ, ճանապարհին դժվարություններ կլինեն: Ինչևէ, հավատարիմներին տրված խոստումն այն է, որ մենք կկարողանանք դիմանալ մինչև վերջ: Իր ելույթում Երեց Սքոթը նշել է հետևյալը. «Դևը չի տոնի հաղթանակ: Անգամ այժմ նա ստիպված է գործել Տիրոջ կողմից դրված սահմաններում: Նա չի կարող վերցնել որևէ օրհնություն, որը վաստակված է: Նա չի կարող փոխել բնավորությունը, որը հյուսված է արդար որոշումների թելերից: Նա չունի զորություն քանդելու հավերժական կապերը, որոնք արվել են սուրբ տաճարում ամուսնու, կնոջ և երեխաների միջև: Նա չի կարող թուլացնել իսկական հավատքը: Նա չի կարող վերցնել ձեր վկայությունը: Այո, այդ ամենը կարելի է կորցնել, եթե տրվենք նրա գայթակղություններին: Սակայն նա ինքնուրույն իր մեջ դրանք կործանելու զորություն չունի»: Ընդունելով այն զորությունը, որը մեզ տրված է գայթակղությանը դիմակայելու համար, մենք կարող ենք հավատարիմ մնալ մեր ուխտերին: Դա կպահանջի հնազանդություն և մեր վկայությունների շարունակ սնուցում: Բայց խոստումը տրված

Նախագահ Փեր Գ. Մալմ

է: Այնպես որ, դուք և ես ենք վերահսկում այդ ընթացքը:

Թող որ ուխտերը պահելու մեր ձգտման մեջ մենք միշտ սնուցենք մեր վկայությունները և զարգացնենք արդար բնավորություն, որը լի է ազնվությամբ: Այդ ժամանակ մենք կտեսնենք, որ իսկապես սատարվում ենք ի վերուստ տրված զորությամբ»:

«Եվ եղավ այնպես, որ ես՝ Նեփիս, տեսա Աստծո Գառի զորությունը, որ այն իջավ Գառի եկեղեցու սրբերի վրա և Տիրոջ ուխտյալ ժողովրդի վրա, որոնք ցրված էին ողջ երկրի երեսին. և նրանք զինված էին արդարությամբ և Աստծո զորության մեծ փառքով» (1 Նեփի 14.14): ■

ՏԵՂԱԿԱՆ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Աջափնյակ ճյուղի համաժողովը

Հասվիրա Մինասարայան, Երևան ճյուղ

2012 թվականի փետրվարի 20 ին տեղի ունեցավ Աջափնյակ ճյուղի համաժողովը: Համաժողովին ներկա էին Տարածքային Յոթանասունական Արայիկ Մինասյանը, Միսիայի Նախագահությունը և շրջանի նախագահությունը: Մեր առաջնորդների խոսքը հագեցված էր Սուրբ Հոգով և նրանց ելույթներից մենք շատ բան սովորեցինք և հոգեպես սնվեցինք: Հաղորդության ժողովին ճյուղի նախագահ ՝ նախագահ Խաչատրյանը անդրադարձավ ճյուղի խնդիրներին և դրված նպատակներին և հատկապես կանգ առավ միսիոներական աշխատանքի վրա, նշելով, որ իրենք նպատակ են դրել ավելացնել մկրտությունների թիվը գործադրելով ջանքեր գտնելու մարդկանց և կիսվելու իրենց վկայությամբ և լավ օրնակ ծառայելու շրջապատում: Այնուհետև խոսեց Նախագահ Քարտերը խոսելով արքայության կառուցման մասին Հայաստանում: Նա ասաց, որ երբ կառուցվում էր Սոլթ Լեյքի տաճարը մարդիկ կտրում էին հսկայական գրանիտե քարեր և բերում Սոլթ Լեյք և տեղադրում Տաճարի հիմքում: Երբ մի անգամ Նախագահ Յանգը հետազոտում էր քարերը, նա տեսավ, որ այդ քարերից մի քանիսը ճաքեր ունեին: Նա ասաց, որ պետք է այդ քարերը հանվեին, որոնք շինարարներն այնքան մեծ դժվարությամբ տեղադրել էին հիմքում: Նրանք ասացին, որ դժվար կլինի անել, բայց նա պատասխանեց, որ Տաճարը պետք է կանգուն մնա մինչև Հիսուս Քրիստոսի գալուստը, իսկ այն չի դիմանա, եթե կանգնած լինի ճաքած քարերի վրա: Սա խիստ խորհրդանշական է Եկեղեցու համար: Նա ասաց, որ Եկեղեցին Հայաստանում հիմնադրելուց ի վեր այնքան շատ մարդիկ են եկել, բայց նրանք այժմ այստեղ չեն: Եկեղեցու անդամներն այն քարերն են, որոնք կազմում են Եկեղեցին և նրանք պետք է ամուր լինեն առանց ճաքերի, որպեսզի դիմանան Հիսուս Քրիստոսի գալստյան ժամանակ:

ԼՈՒՍԱՆԿԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ

Աջափնյակ ճյուղի համաժողովը

Յոթանասունի անդամ Արայիկ Մինասյանը Տարածքի Յոթանասունից, սկսեց իր խոսքը բացատրելով, թե որքան կարևոր է կարգապահությունն ու ինքնակարգապահությունը: Նա մեզ բոլորիս հորդորեց կատարելագործվել ամեն օր, մի քիչ ավելի լավը դառնալ քան երեկ, իսկ վաղը ավելի լավը քան այսօր: Հաղորդության ժողովում ակնածանքի և լռության անհրաժեշտությունը կարևոր է, որպեսզի Հոգին ներկա լինի: Ճշտապահությունը կարգապահության ձևերից մեկն է և Աստված մեզանից սպասում է

կարգապահություն, քանի որ Նրա տունը կարգ ու կանոնի տուն է:

Հաջորդ թեման, որի մասին նա խոսեց ճյուղի խորհուրդներն էին, որոնք մեծ օգնություն են քահանայության ղեկավարների համար, որպես միջոց, որոնք միավորում են ժողովրդին և լուծում շատ հարցեր: Մեր Եկեղեցու Մարգարեն խորհուրդ է անում իր խորհրդականների և 12 Առաքյալների հետ: Ճյուղի նախագահները պետք է կանոնավորապես խորհուրդներ հրավիրեն իր խորհրդականների և մյուս բոլոր օժանդակ կազմակերպությունների ղեկավարների և լիաժամկետ միսիոներների հետ: Յուրաքանչյուր ժողովից առաջ նրանք բոլորով պետք է աղոթեն և մտածեն հոգիների փրկության մասին: Խորհուրդները պետք է ունենան օրակարգ և ժողովը պետք է տևի ոչ ավելի քան 60 90 րոպե: Յուրաքանչյուր խոսող պետք է իմանա, թե քանի րոպե կարող է խոսել, բավականաչափ ժամանակ ունենալու բոլոր մասնակիցների և օրակարգի բոլոր հարցերի համար: Նախագահությունները պետք է խորհուրդ ներկայացնեն այն հարցերը և խնդիրներն ու պահանջները, որոնք լուծումներ են պահանջում: Օրինակ, եթե ճյուղի նախագահը տեսնում է, որ ինչ որ մեկը ոչ ակտիվ է դառնում, նա պետք է մտածի խորհրդի մյուս անդամների հետ, թե ինչպես օգնի այդ եղբորը կամ քրոջը, քանզի միմյանց օգնելով միայն կարող ենք փրկության հասնել: Ճյուղի նախագահի ծառայությունը ավելի հաջողված կլինի, եթե Եկեղեցու անդամներն աջակցեն և օգնեն նրան:

Երեց Մինասյանը խոսեց նաև միսիոներական աշխատանքի մասին, որի հաջողությունը կրկին լիաժամկետ միսիոներների և Եկեղեցու անդամների միասնության մեջ է: Այժմ ամենաթանկ բանը ժամանակն է և այն ճիշտ տնօրինելու համար մենք պետք է ճիշտ բաշխենք այն: Երեց Մինասյանը հիշեցրեց մեզ առաջինը դնել ընտանիքը, երկրորդը աշխատանքը և երրորդը Եկեղեցին և մեր ծառայությունները: Եթե այցելենք ոչ ակտիվ անդամներին, դա դառնում է մեր ներդրումը միսիոներական աշխատանքի մեջ: Այդ անելիս կարևոր է հիշել սիրո և հարգանքի սկզբունքները, և խուսափել քննադատությունից: Իր ելույթի վերջում Երեց Մինասյանը ոգեշնչեց եղբայրներին և քույրերին օգնել նրանց, ովքեր կարիքի մեջ են՝ իմաստությամբ օգտագործելով բարօրության ծրագիրը, լինել ուրախ և խանդավառ, քանի որ Աստծո շնորհը մեզ հետ է: ■

ՎՕՍ բժիշկների կողմից նորածինների վերակենդանացմանը նվիրված սեմինարներ Երևանում

Մարգարիտա Այվազյան, Երևան ճյուղ

Մի խումբ բժիշկներ 2012 թվականին բժիշկների և քույրերի համար սեմինարներ անցկացրեցին նորածինների վերակենդանացման վերաբերյալ: Ավելի քան 35 բժիշկներ և քույրեր հնարավորություն ունեցան ոչ միայն ուսուցանվել, այլ նաև պրակտիկա ձեռք բերել մանկեկենների վրա՝ փորձառություն ստանալու համար: Այդ բժիշկների խմբում էին բժիշկ Ջորջ Բեննեթը, բժիշկ Դոննա Դիզոն Թաուսոնը և բժիշկ Քարոլին Ռիչ Դենսոնը:

Բժիշկ Ջորջ Բեննեթը՝ թոշակի անցած անեստեզիոլոգ և նրա կինը՝ Մարսիան, նորածինների վերակենդանացման ուսուցողական ծրագրերի մասնագետներ են, ովքեր հովանավորվում են Եկեղեցու կողմից: Անցած ութ տարիների ընթացքում նրանք հիմնադրել են ուսուցողական ծրագրեր արևելյան և կենտրոնական Եվրոպայում՝ աշխատելով Թուրքիայում, Ուկրաինայում, Ռուսաստանում, Ռումինիայում, Ալբանիայում, Սերբիայում, Բոսնիայում, Հայաստանում, Կազախստանում, Կիրգիզիայում, Վրաստանում, Մակեդոնիայում, Մոնտենեգրոյում և Տաջիկստանում, ինչպես նաև Եթովպիայում, Աֆրիկա: Նրանք սիրում են աշխատել բժիշկների, մանկաբարձների և քույրերի հետ, և ուսուցանել նրանց այն հմտությունները, որոնք նրանց անհրաժեշտ են՝ փրկելու այն մանկիկներին, որոնք ծնվելուց հետո չեն շնչում: Նրանց համար սքանչելի օրհնություն է իրենց կյանքում հանդիպել այդքան շատ հիանալի մարդկանց, ովքեր ցանկանում են օգնել մանկիկներին և ընտանիքներին: Նրանք իրենք ունեն չորս երեխա և ինը թոռ:

Բժիշկ Դոննա Դիզոն Թաուսոնը պերինատոլոգ է և հոգ է տանում կանանց, ովքեր հղիության ընթացքում բժշկական և մանկածնության հետ կապված բարդություններ են ունենում: Նա բժշկական պրակտիկայով է զբաղվում ինչպես Յուտայի հովտի շրջանային բժշկական կենտրոնում Պրովոյում, Յուտա, այնպես էլ Յուտայի Համալսարանում Սոլթ Լեյք Սիթիում, Յուտա, որտեղ նա պրոֆեսորի օգնական է: Նրա հետազոտական հետաքրքրությունները ներառում են հղիության բարդությունների մոլեկուլային ասպեկտները: Նա բավականություն է ստանում ճանապարհորդելով ողջ աշխարհով մեկ և ուսուցանելով նորածինների վերակենդանացման մասին և հանդիպելով այլ մարդկանց հետ: Նա երկու երիտասարդների մայր է:

ԼՈՒՍԱՆԿԱՐԸ՝ ՄԱՐԳԱՐԻՏԱ ԱՅՎԱԶՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ

Մի պահ ուսուցումից

Բժիշկ Քարոլին Ռիչ Դենսոնը պատմեց իր մասին: «Ես հետաքրքրվում էի բժիշկ դառնալու մասին երեխա ժամանակից ի վեր: Հայրս մանկաբույժ էր և շատ էր քաջալերում ինձ հետևել իր մասնագիտությանը: Ես սովորեցի մանկաբուժություն, ապա որոշեցի շարունակել դառնալով նորածինների մասնագետ և ներկայումս աշխատում եմ Մակքեյ Դի հիվանդանոցում, Օգդենում, Յուտա: Ես սիրում եմ այն, ինչ անում եմ և հաճույքով եմ գնում աշխատելու ամեն օր: Չկա ավելի հրաշալի բան, քան հենց նոր երկնքից եկած մանկիկների և նրանց ծնողների հետ աշխատելը: Ես ունեմ 4 երեխա և 3 թոռ: Ես իսկապես բավականություն ստացա աշխատելով հրաշալի մարդկանց հետ Հայաստանում և ես միշտ կպահեմ դա իմ հիշողության մեջ: Այս հիանալի մարդկանց ծառայելու լավագույն պարգևատրությունը կլինի բազմաթիվ փրկված կյանքերը և բազում երջանիկ ընտանիքները Հայաստանում»: ■

Սփոփող Միության 170-րդ տարեդարձը

Հայարփի Մանուկյան, Արտաշատ ճյուղ

Շաբաթ օրը՝ 2012 թվականի մարտի 17 ին, Արևելյան Եվրոպայի տարածաշրջանի բոլոր միսիաներում և ցցերում տեղի ունեցան Սփոփող Միության համաժողովներ, որոնք նվիրված էին այդ կազմակերպության ստեղծման 170 ամյակին: Հոբելյանական ժողովի կարևոր մասը դարձավ ողջ արևելաեվրոպական տարածքում երեք քույրերի ելույթների հեռարձակումը Եկեղեցու բարձրագույն ղեկավարությունից, ովքեր ներկայացնում էին Սփոփող Միությունը, Երիտասարդ Կանանց կազմակերպությունը և Երեխաների Միությունը: Ակնհայտ է, որ այս երեք կազմակերպությունների ջանքերն ուղղված են այն բանին, որ օգնեն կանանց բացահայտել իրենց Աստվածային ներուժը: Հայաստան Երևան շրջանի Սփոփող Միության միջոցառումը, որը նվիրված էր Սփոփող Միության ստեղծման 170 ամյակին տեղի ունեցավ Արաբկիր ճյուղում: Ղեկավարները նպատակ էին դրել յուրաքանչյուր քրոջ սրտին հասցնել Եկեղեցում կնոջ դերի և ծառայության կարևորությունը: Միջոցառման նպատակն էր նաև քույրերի մերձեցումը և թույլերի և պասսիվ անդամների հոգևորության բարձրացումը: Երևանի Արաբկիր ճյուղում հավաքվել էին քույրեր յոթ ճյուղերից, իսկ Գյումրիում և Վանաձորում միաժամանակ անցկացվում էին միջոցառումներ: Ամենուր տիրում էր ջերմ ընկերական մթնոլորտ, քույրերին մտերմացնում էր Քրիստոսի գթառատ սերը: Միջոցառման ժամանակ տեղի ունեցավ քույրերի տաղանդների ցուցադրում: Միջոցառմանը ներկա էին Շրջանի Նախագահության ներկայացուցիչներ: Շրջանի Նախագահության Երկրորդ Խորհրդական Ս. Այվազյանը խոսեց ընտանիքի, կնոջ դերի մասին և հորդորեց, որ քահանայությանն աջակցեն սիրով և ընտանիքում ցույց տան հարգանք և ըմբռնում քահանայություն կրողների հանդեպ: Նա մեջբերեց ՎԱՌ 25.5 հատվածը, որտեղ ասվում է Էմմա Սմիթին. «Եվ քո կոչման պաշտոնը կլինի մխիթարել իմ ծառային՝ Ջոզեֆ Սմիթ կրտսերին՝ քո ամուսնուն իր չարչարանքների մեջ, սփոփիչ խոսքերով, հեզության հոգով»: Նա նշեց, որ այս հորդորը վերաբերում էր ոչ միայն Էմմա Սմիթին, այլ մեր բոլոր կանանց, որովհետև առանց

ԼՈՒՍԱՆԿԱՐԸ՝ ՎԱՐՈՒԺԱՆ ԴՈՂՈՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ

ԼՈՒՍԱՆԿԱՐԸ՝ ՎԱՐՈՒԺԱՆ ԴՈՂՈՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ

կանանց աջակցության ոչինչ չի ստացվի ոչ ընտանիքում, ոչ էլ Եկեղեցում:

Քահանայությունը կանանց կարիքն ունի Եկեղեցում, նրանց սերն ու գթությունը և հավատարմությունը կարող են հրաշքներ գործել: Յուրաքանչյուր կին շատ թանկ է Աստծո համար, նրանք Աստծո դուստրերն են և Նա սիրում է և հոգ տանում նրանց: Վերջում քույրերը մեծ հետքրքրությամբ դիտեցին Քույր Վիքսոնի, Քույր Դալտոնի և Քույր Բեքի ելույթները: Նրանց ոգեշնչված և սիրով լցված ուղերձները օգնեցին շատ քույրերի զորացնել իրենց վկայությունները: ■

Սիոնի քույրերը երգում են

Քույրերը շփվում են միմյանց հետ ջերմ ընկերական մթնոլորտում:

Ցիցը իբրև ապահով ապաստան՝ անսասան վրան

Հովիկ Հովհաննիսյան Աջափնյակ ճյուղ

Երբ ես շրջանի երիտասարդ տղամարդկանց նախագահն էի, մենք 12–18 տարեկան տղաների ինչպես նաև աղջիկների համար ճամբար էինք կազմակերպում: Այդ միջոցառումը նպատակ ուներ ամրացնելու երիտասարդների վկայությունը վերականգնված ավետարանի մասին, նախապատրաստել երիտասարդներին միսիա գնալու, ինքնուրույնություն և տարբեր հմտություններ սովորելու: Ճամբարում բոլորն ապրում էին վրաններում. և ըստ ծրագրի՝ երիտասարդներն ինքնուրույն պետք է կանգնեցնեին վրանները: Նրանք, ովքեր մի քանի անգամ էին եղել ճամբարում, դա կարողանում էին անել հեշտությամբ, իսկ ովքեր առաջին անգամ էին դա անում, դժվարանում էին և մեծահասակներից խորհուրդներ էին հարցնում:

Ճամբարներից մեկի ժամանակ չորս տեղանոց մի վրան պետք է կանգնացնեին Գյումրի ճյուղի երիտասարդները: Նրանց մեջ կար մի հրաշալի, բայց չարաճճի մի տղա, որն առաջին անգամն էր եկել ճամբար և դեռ նման փորձ չուներ: Տղաները փորձում էին ինքնուրույն կանգնացնել վրանը և ես կանգնած դիտում էի նրանց: Ես նկատեցի, որ այդ տղան իր վրա էր վերցրել ղեկավարի դերը, իսկ մյուսները հնազանդ անում էին այն, ինչ որ նա էր ասում: Նա պտտվում էր վրանի շուրջը, խորհուրդ էր տալիս մյուս անդամներին, որ այս պարանը ձգեին, այն պարանը ձգեին, բայց արդյունքում վրանը քանդվում էր: Բոլորն արդեն կանգնեցրել էին իրենց վրանները, բայց այս թիմը դեռ տանջվում էր: Մեր սպորտային ղեկավարի հետ մենք մոտեցանք տղաներին և դանդաղ՝ քայլ առ քայլ սկսեցինք բացատրել, թե ինչպես է կառուցվում վրանը՝ սկզբից կանգնեցնում են 2 կենտրոնական ցցերը, որը պահում են 2 հոգի և հետո գետնի մեջ են խփում փոքր՝ եզրային ցցերը և պարաններըձգելու միջոցով կանգուն են պահում ողջ վրանը: Ընդ որում, ցցերը պետք է իրենց տեղում լինեն, իսկ պարանները՝ համաչափ ձգված, որպեսզի այն կանգուն և դիմացկուն լինի քամիներից, և որ անձրևի ժամանակ վրանի մեջ ջուր չլցվի: Մինչ

մենք բացատրում էիք նոր տղային, թիմի մյուս անդամներն ինքնուրույն կանգնեցրին վրանը: Ճիշտ է՝ ոչ այնքան կատարյալ, բայց այնուամենայնիվ, կանգնեցրեցին: Սակայն ես խնդրեցի, որ նրանք քանդեն և նորից կանգնեցնեն իրենց վրանը: Առանց տրտնջալու տղաները հնազանդվեցին և համբերատար աշխատեցին, մինչև ի վերջո, միասնական ուժերով շատ լավ վրան կանգնեցրեցին: Այս պատմությունը նման է ցից կառուցելու մեր ջանքերին: Եսայիայի Մարգարեությունում կարդում ենք. «Նայիր Սիոնին, մեր տոնախմբության քաղաքին, քո աչքերը կտեսնեն Երուսաղեմը, իբրև ապահով բնակարան՝ անսասան վրան, որի ցցերը հավիտեան չեն շարժվի, և որի չվանները չեն կտրվի» (Եսայիա ԼԳ.20): Այստեղ Սիոնը նմանեցվում է վրանի, որը ամրացված է չվաններով և ցցերով, և որն ապահով վայր է Աստծո ժողովրդի համար: Վարդապետություն և Ուխտերի 115.6 կետում ասվում է, որ «Միասին հավաքվելը Սիոնի հողի վրա և նրա ցցերում, պաշտպանություն և ապաստան [պետք է] լինի փոթորիկից, ցասումից, երբ այն անխառն կթափի ողջ երկրի վրա»: Այստեղ էլ սովորում ենք նույն սկզբունքը, բայց վերջին օրերի համար: Մեր օրերին Սրբերին խորհուրդ է տրվում կառուցել Սիոնն այնտեղ, որտեղ նրանք ապրում են աշխարհում:

Երիտասարդները սովորում են վրան կառուցել

Վերջերս Տարածքային Յոթանասունական՝ Երեց Մինասյանն այցելել էր մեր ճյուղ: Նա մեզ ուսուցանում էր, որ չլքենք մեր բնակավայրերը և չգնանք տնտեսապես ավելի ապահով երկրներ՝ աշխատանքի և բարեկեցիկ կյանքի փնտրտուքներով: Սա կարող է անհասկանալի թվալ, քանի որ մենք ունենք մեր ընտանիքները բարեկեցությամբ ապահովելու սուրբ պարտականություն: Սակայն ապահովության ու բարեկեցության համար պետք չէ հեռու գնալ: Բոլորս ուզում ենք, որ մեր երեխաները ապրեն ապահով վայրում, որ պաշտպանված լինենք ամեն չարիքից: Ես նույնպես ցանկանում եմ, որ մեր ընտանիքները՝ մեր երեխաները և թոռներն ապրեն ապահով վայրում , որտեղ ոչ «քամիները» և ոչ էլ «անձրևները» չեն սպառնա մեզ: Ես ուզում եմ, որ նաև Հայաստանի ժողովուրդն ապրի այդպիսի մի ապահով վայրում: Եսայիա ԾԴ.2–3 հատվածներում ասվում է. «Լայնացրու քո վրանի տեղը, և թող քո բնակարանի վարագույրները տարածեն, մի խնայիր, երկարացրու չվաններդ, և ցիցերդ պնդացրու: Որովհետև դու պիտի աջ ու ձախ տարածվես, և քո սերունդը պիտի ժառանգի ազգերին, և ավերակված քաղաքները շենացնելու են»: Մենք խոստում ունենք, որ «ավերակված քաղաքները շենացնելու են»: Դրա համար իմ մեծ ցանկությունն է, որ Հայաստանում Սիոնի

ԼՈՒՍԱՆԿԱՐԸ՝ ԿԱՌՈՒԺԱՆ ՊՈՂՈՍՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ

ԼՈՒՍԱՆԿԱՐԸ՝ ԿԱՌՈՒԺԱՆ ՊՈՂՈՍՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ

ցից հաստատվի, որը կլինի «այն ապահով բնակարանը՝ անսասան վրանը, որի ցցերը հավիտեան չեն շարժվի, և որի չվանները չեն կտրվի»: Յուրաքանչյուր անդամ պետք է ոչ թե ձգտի լքել իր բնակավայրը, այլ իր ներդրումն ունենա այստեղ՝ Հայաստանում Սիոնի կառուցմանը: Ես գիտեմ, որ մեր անդամները խիզախ մարդիկ են և կարող են դա անել: Այսօր մենք նման ենք այն երեխաներին, որոնք սրտանց ցանկանում էին վրան կանգնեցնել, բայց նրանց չէր հերիքում գիտելիքներ, փորձ, սեր, միաբանություն և էլի շատ բաներ: Ինչպես այդ երիտասարդները, ես զգում եմ, որ ունեմ սխալներ, բայց Եկեղեցու ղեկավարները, որոնք կանչված են Աստծո կողմից, ի սպաս են դնում իրենց ողջ ջանքերը, սերը և համբերատարությունը, որպեսզի մենք չսխալվենք և երջանիկ լինենք: Միշտ դժվար է անել ինչ-որ բան առաջին անգամ: Կարող են լինել հաջողություններ և սխալներ: Բայց ես գիտեմ, եթե մենք առաջնորդվենք մեր Տիրոջ կողմից՝ Սուրբ Հոգով և Եկեղեցու ղեկավարների ուղերձներով և խորհուրդներով, մենք կարող ենք բոլոր դժվարությունները հաղթահարել: Ես գիտեմ, որ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին Տիրոջ Եկեղեցին է: Ես վկայում եմ, որ մենք ունենք Մարգարե, որը կանչված է Աստծո կողմից Նրա զավակներին Իր խոսքը այս վերջին օրերին հայտնելու համար: Ես գիտեմ, որ աշխարհում չկա ավելի «ապահով վայր», քան Տիրոջ վրանը, որտեղ ապրում են «սրտով մաքուրները», որը Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին է, որտեղ կա ապահովություն և բարեկեցություն: Թող որ բոլորս հետևենք հետևյալ հորդորին. «Վեր կացեք և շողացեք, որպեսզի ձեր լույսը չափանիշ լինի բոլոր ազգերի համար» (Տես ՎԿՈՒ 115.5): ■

Կարևոր է մեր ղեկավարների խորհրդին հետևելը:

Իմ տպավորությունը տաճարի մասին

Քնարիկ Գևորգյան, Արաբկիր ճյուղ

Երբ տաճարում էի ես տեսա սուրբ գործեր, սուրբ դեմքեր, ծեսեր կատարողները՝ խոնարհի, ժուժկալ, և ես տեսա Աստծո տունը, զգացի Նրա քաղցրությունը, զգացի այն, ինչ ես չէի զգացել ամբողջ կյանքումս: Դա իրոք Աստծո տունն էր, ես նայում եմ ու տեսնում, որ մենք շատ բան ունենք անելու և ապաշխարհելու: Երեք հարյուր հոգի ծառայում էին տաճարում: Բոլորը շշուկով էին խոսում, խոնարհ, լուռ, եթե մենք չտեսնեինք, ոչ մի պատկերացում չէինք ունենա, որ տաճարում տիրում է այդ մթնոլորտը: Բոլորը սիրալիր, բարի, քաղցր խոսքերով էին մոտենում: Ես չգիտեմ՝ ես բառեր չեմ գտնում այդ վայելքի մասին պատմելու, որ ես վայելեցի վեց օրում՝ տաճարում: Ես իմ վեց օրը անցկացրեցի աղոթքով և Տիրոջս Հոգին վայելելով: Ուրեմն մենք պետք է լինենք հեզ, խոնարհ, անբիծ ու անարատ ինչպես Հիսուսն էր: Լինենք մի մարդ՝ մի հոգի, ինչպես Հիսուսն ասաց՝ սիրեք մեկդ մյուսին ինչպես ես ձեզ սիրեցի:

Եկեք մենք էլ զինվենք Հիսուս Քրիստոսի հավատքով ու վահանով, որը Սուրբ Հոգին է, որ հաղթենք չարի ծրագրած փորձությունները և թույլ չտանք, որ գալիք փոթորիկը մեզ կտրի հավատքից:

Մորմոնի գիրքը մեծ վկայություն է, Աստվածաշնչի լրիվությունն է, որով հիմա մենք սնվում ու աճում ենք հավատքի մեջ: Սա է ճշմարիտ հոգևոր կերակուրը, այս կյանքն ունայն է, հարստությունը խոտ է, ծաղիկ՝ այսօր կա, վաղը չկա: Եկեք գանձեր դիզենք երկնքում: Մենք պետք է պատրաստ լինենք Աստծո խոսքին ու հավատքին, մտքին ու ճամփին, լինենք պատրաստի զինվոր, դիմավորենք Քրիստոսի Երկրորդ Գալուստը, որ ամոթով չլինենք: ■

ԱԼԼԱ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ

Քնարիկ Գևորգյանը գիտի, որ տաճարը Տիրոջ Տունն է:

Մոր Աղոթքը

Նելլի Կարապետյան,
Արտաշատ ճյուղ

Ակրտվեց իմ դուստրը՝ Սառան: Ամբողջ 8 տարի ես սպասում էի այդ մկրտությանը: Հիմա պատմեմ այն հանգամանքները, որոնք ինձ ուղղորդեցին դեպի ՎՕՍ Եկեղեցի և ինչու էի ես սպասում իմ դստեր 8 ամյակին:

Երկար տարիներ ամուսնացած լինելով ես զրկված էի մայրության գերագույն շնորհից և կատարվեց այն հրաշքը, որ մեր Երկնային Հայրը շնորհել է կանանց՝ ես մայրացա . . .

Զավակս ծնվեց 2004թվականի հունվարի 6 ին, որն ըստ հայկական ավանդական եկեղեցու Հիսուս Քրիստոսի ծննդյան օրն է, սակայն երեխաս ծնվել էր թույլ և գտնվում էր օրհասական վիճակում: Ես չգիտեի ինչպես չորացնել արցունքներս, քանի որ ծնվելուց հետո երեխայիս չէի տեսել: 10-րդ օրն էր և բուժող մանկաբույժն ասաց, որ գրեթե վերջին միջոցներն են գործադրում, որ երեխայիս կարող է միայն հրաշքը փրկել:

Կեսօրվա ժամ էր, ինձ հետ նույն հիվանդասենյակում պառկած էր մի կին ևս, որը նույնպես երեխա էր ունեցել: Երբ ես հուսահատությունից ձեռքերս էի կոտրատում, նա ինձ հորդորեց ծունկ ծալել և դիմել Աստծուն: Ես միշտ խուսափել եմ բարձրաձայն աղոթելուց, սակայն հոգուս մեջ միշտ էլ հավատացել եմ և աղոթել: Ես և նա ծնկի իջանք և ես սկսեցի աղոթել. «Տեր Աստված, եթե ինձ լսում ես՝ մի նշան ուղարկիր, կապրի՞ արդյոք երեխաս թե ոչ . . .»: Հետո դարձյալ հուսահատ և կոտրված սրտով սպասում էի, միաժամանակ վախով և հույսով նայելով դռանը: Հանկարծ դուռը բացվեց և ներս մտան 2 երիտասարդ աղջիկներ՝ ինչ որ կրծքանշաններով, դրանք Վերջին Օրերի Սրբեր Եկեղեցու միսիոներներն էին, ովքեր պայմանագիր ունեին Արտաշատ քաղաքի ծննդատան հետ և փոքրիկ նվերներով շնորհավորում էին նոր ծնված փոքրիկներին: Նրանք ներս գալով իրենց քայլերն ուղղեցին ուղիղ դեպի ինձ և մոտենալով տվեցին նորածինների համար նախատեսված փոքրիկ նվերը: Դա հենց իմ խնդրած նշանն էր: Ես կրծքիս էի սեղմել միսիոներների տված փոքրիկ կապոցը և արցունքներիս միջից իմ գոհությունն էի հայտնում Աստծուն պատասխանի համար: Ես այդ պահին առանց որևէ կասկածի գիտեի, որ իմ փոքրիկն անցել էր ճգնաժամը, որ հրաշքը տեղի էր ունեցել, որ իմ երեխան ապրելու էր:

Երեխաս ապաքինվեց, ես նորովի վայելեցի մայրության պարգևը: Երբ երեխաս 3 ամսական էր, սկսեցի հաճախել Եկեղեցի և մկրտվեցի: Դուստրս մեծացել է այս Եկեղեցում և սովորելով ավետարանի առաջնային սկզբունքները, նա պատրաստվեց և այս տարվա փետրվարին մկրտվեց: Մկրտվելուց հետո կիսվելով իր վկայությամբ, նա ասաց. «Բարև ձեզ հարգելի քույրեր և եղբայրներ, ես շատ ուրախ եմ, որ դուք այստեղ եք: Ես ուզում եմ, որ դուք իմանաք, որ այս Եկեղեցին ճշմարիտ է և եթե աղոթեք ամբողջ սրտով և հոգով, Աստված կլսի ձեր աղոթքը և կկատարի ձեր խնդրանքը»: Դստերս վկայությունը ցնցեց ինձ. ես հասկացա, որ Աստված գիտեր ինձ համար նախանշված ճանապարհը, Աստված տվեց այն ծրագիրը, որն իմն էր, ինչպես նաև իմ երեխայինը:

Հավատացեք և կտրվի ձեզ, թակեք և կբացվի ձեզ, որոնեք և կգտնեք (Տես Մատթեոս Է.7): ■

ԼՈՒՍԱՆԿԱՐ: ՔՈՒՅՐ ԸՆՏԻՐ ԿՈՂՄԻՑ

Նելլին և նրա դուստրը՝ Սառան, երջանիկ են Եկեղեցու անդամ լինել:

ARMENIAN